ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2491-Ա « 14 » մայիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ Գ. ԵՎ Ս. ԳՈՒՐԶԱԴՅԱՆՆԵՐԻ ՓՈՂՈՑ Հ.91/2 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԱԲԱԶՅԱՆԻ, ԱՐՄԱՆ ՍՅՈՄԻԿԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ, ԷՌՆԵՍՏԻՆԱ ՍԼԱՎԻԿԻ ԱԲԱԶՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Անահիտ Արամայիսի Աբազյանի (ծնված 17.05.1950թ.), Արման Սյոմիկի Արզումանյանի (ծնված 11.03.1987թ.), Էռնեստինա Սլավիկի Աբազյանի (ծնված 17.11.1974թ.) դիմումները (20.07.2022թ.Դ-52536-22):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 12.12.2025թ. հ.ԱՏ-12122025-01-0208 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 05.05.2026թ. հ.Հ-3540 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 24.02.2026թ. հ.20-Ել-Դ-6385 եզրակացությունը, համաձայն որի ք.Երևան, Էրեբունի Սոֆիայի փողոց հ.88/2 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1.Վերականգնել ք.Երևան, Էրեբունի Գ. և Ս. Գուրզադյանների փողոց հ.91/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Անահիտ Արամայիսի Աբազյանի, Արման Սյոմիկի Արզումանյանի, Էռնեստինա Սլավիկի Աբազյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 167.9քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 167.9քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Էրեբունի Գ. և Ս. Գուրզադյանների փողոց հ.91/2 հասցեում գտնվող 167.9քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Երևան, Էրեբունի Լիսինյան փողոց հ.91 բնակելի տանը տրամադրել «Էրեբունի Գ. և Ս. Գուրզադյանների փողոց, հ.91/2» հասցեն:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246